


ԱՒ. ԻՍԱԲԱԿԵԱՆ



ԱՄԻՒ ԱԼԻ ՄԱՏԵՒԻ

Տպագր. « Փ Ի Ի Ն Ի Կ »

ՊԵՏՐՈՒԹ

1939

PRINTED IN LEBANON

891.99
Ի-75

891.99
Ի-75

6 NOV 2011



ԱՌ. ԻՍԱԿԱԿԵԱՆ

ԱՐԴԻ ԱԿՆԻ ՄԱՅՆԻՔԻ

Տպագր. « Փ Ի Ի Ն Ի Կ »

ԳԵՅՐՈՒԹ

1939

ԱՔՈՒ - ԼԱՂԱ ՄԱՋԱՐԻ

(ԱՐՔԱ ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԻ Ժ. — ԺԱ. ԴԱՐՈՒՄ)

Ք Ա Ս Ի Տ

Աբու Լաղա Մահարին,
 Հռչակատու բանաստեղծը Բաղդադի,
 Երեք տասնեակ տարիներ ապրեց Խալիֆաների հոյակապ քաղաքում,
 Ապրեց փառքի եւ վայելքի մէջ.
 Հզօրների եւ մեծատունների հետ սեղան նստեց,
 Գիտունների եւ իմաստունների հետ վէճի մտաւ,
 Սիրեց, եւ փորձեց ընկերներին.
 Եղաւ ուրիշ-ուրիշ ազգերի հայրենիքներում.
 Տեսաւ եւ դիտեց մարդկանց եւ օրէնքները:
 Եւ նրա խորաթափանց ոգին ճանաչեց մարդուն, ճանաչեց եւ խորագին
 Ատեց մարդուն եւ նրա օրէնքները:

Եւ որովհետեւ Նա չունէր կին եւ երեխաներ՝
 Իր բոլոր հարստութիւնը քաժանեց աղքատներին,
 Առաւ իր ուղտերի քարաւանը՝ պաշարով ու պարէնով,
 Եւ մի գիշեր, երբ Բաղդադը քուն էր մտել Տիգրիսի
 Նոճիաճածկ ափերի վրայ, —

Գաղտնի հեռացաւ քաղաքից

ԱՌԱՋԻՆ ՍՈՒՐԱՀ

Եւ քարաւանը Աբու Լաղայի՝ աղբիւրի նման մե՛ղմ կարկաջելով՝
 Քայլում էր հանգիստ, նիրհած գիշերով, հնչուն զանգերի անս՛ւշ ղօղանջով:

Հաւասար քայլով հափում էր ճամբան այն քարաւանը ուր՛ը ու մտն՛ը,
 Եւ ղօղանջները ծորում քաղցրալուր՝ սղսղում էին դաշտերը անդորը:

Մեղկ փափկութեան մէջ Բաղդադն էր նիրհում ջէննաթի շքե՛ղ, վա՛ռ երազներով,
 Գիւլստաններում բլբուլն էր երգում գազէլներն անուշ՝ սիրոյ արցունքով:

Շատրւանները քրքշում էին պայծառ ծիծաղով ազամանդեղէն,
 Բայր ու համբոյր էր խնկարկւում չորս կողմ Խալիֆաների քէօքից լուսեղէն:

Գահար աստղերի քարաւանները թափառում էին երկնի ճամբէքով,
 Եւ ղօղանջում էր սղջ երկինքն անհուն՝ աստղերի շքեղ, անշէջ դաշնակով:

Մեխակի բոյրով հովն էր շէնջում հէքեաթներն հազար ու մէկ գիշերւայ,
 Արմաւն ու նոճին ոնուշ քնի մէջ օրօրում էին ճամբէքի վրայ:

Եւ քարաւանը՝ օրօ՛ր ու շորո՛ր՝ զնգում էր առաջ ու ետ չէր նայում,
 Անյայտ ուղին էր Աբու Լաղային բիւր հրապոյրով կանչում, փայփայում:

— «Գնա՛, միշտ գնա՛, իմ քարաւանս, և քայլէ՛ մինչև օրերիս վերջը, —
 Այսպէս էր խօսում իր սրտի խորքում Աբու Մահարին, մեծ բանաստեղծը.

Գնա՛, մենաւոր վայրերը թափո՛ւր, ազա՛տ, կո՛յս և սո՛ւրբ զմրուխտեայ հեռուն.
 Դէպի արեւ սլացի՛ր անդուլ, և սիրտս այրի՛ր արեւի սրտում:

Ախ, մնաք բարեւ չեմ ասում ես ձեզ, իմ հօր գերեզման, օրօ՛ցք մայրական,
 Իմ հոգին յաւէրժ խռով է ձեզ հետ, հայրենական յարկ, յուշե՛ր մանկական,

Ես շատ սիրեցի իմ ընկերներին, և բոլոր մարդկանց՝ մօտիկ ու հեռուն,
 Իժ գարձաւ խայթուն իմ սէրը հիմա, թոյն ատելութեամբ սիրտս է եռում:

Ատում եմ, ինչ որ սիրել եմ առաջ, ինչ որ տեսել եմ մարդկային հոգում,
 Մարդկային հագում՝ զազիր ու նանիր՝ համբել եմ հազար զարշա՛նք ու նողկո՛ւմ:

5817-16



Բայց ամէնից շատ ատում եմ հազար ու մէկերորդը — Կեղծիքը հողաւ,
Որ զարդարում է անմեղ սրբերի լուսապսակով երեսը մարդու:

Մարդկային լեզու, դու որ երկնային թայրով ու բայրով, շղարշով պայծառ
Մածկում ես մարդու գծախքը հողու, հեգե՞լ ես արդեօք ճշմարիտ մի բառ:

Գնա՛ անապատ, իմ քարաւանս, վայրի, ամայի ափերը բոցոտ,
Եւ իջեւանիր այն պղնձացած, շէկ ժայռերի տակ գազանների մօտ:

Խփեմ վրանս, օձ-կարիճների բների վրայ վրանս խփեմ,
Այնտեղ բիւր անգամ ես ապահով եմ, քան թէ մարդկանց մօտ, Կե՛ղծ ու ժպտադէ՛մ:

Կամ ընկերի մօտ, ա՛խ, որի կրծքին ես դնում էի գլուխս սիրով,
Կուրծքը ընկերի, որ շղարշում է անդարձ կտրտի անդունդը ստով:

Այնքան ժամանակ, որքան արեւ կ'այրէ Սինայի սնարները վէս,
Եւ անապատի գեղին շեղերը յորձանքներ իր տան ալիքների պէս.


Ես չեմ կամենայ ողջունել մարդկանց, նրանց սեղանից պտտառ չեմ կտրի.
Գազանների մօտ հացի կը նստեմ, ողջոյնը կ'առնեմ բոբենիների:

Եւ գազանները թո՛ղ ինձ յօշոտեն, բոցոտ հողմերը շաշեն ինձ վրայ,—
Եւ այսպէ՛ս, մինչև օրերիս վերջը, քարաւանս անդա՛րձ, գնա՛ ու գնա՛...».

Եւ վերջին անգամ Աբու Մահարին ետ դարձաւ նայեց նիրհած Բաղդադին,
Գարշանքով շրջեց ճակատը կնճռոտ և փարեց ուղտի թաւ պարանոցին:

Միտով գուրգուրեց, չեմ չըթունքներով համբուրեց ուղտի աչքերը վճիտ,
Եւ թարթիչներից նորա կախեցին անդուսպ արցունքի երկու այրող շիթ:

Անո՛ւշ մըմունջով, հանգիստ, միաշափ մեղմ օրօրում էր ձիգ քարաւանը,
Գնում էր առաջ գէպի անապատ, անյա՛յտ ափերը, կոյս-հեռատանը...



Եւ ոլորեալ էր այն քարաւանդ բարձր արմաւենի շարքերի միջով,
Փռչի էր հանում, — փռչում քարաւան, որ վարում էր լուռ՝ քամին հուր չնշով:
— «Քայլէ՛, քարաւան, ի՞նչ ենք մենք թողել, որ կարօտանքով ցանկանք մեր դարձը.
Այսպէս էր խօսում իրեն սրտի հետ Աբու Մահարին, մեծ բանաստեղծը:
Թողել ենք այնտեղ կի՞ն ու բարեկամ, օրէնք, իրաւունք և արդարութի՞ւն,
Քայլէ՛, կոնգ մի՛ առ. — Թողել ենք միայն չղթայ ու կապանք, սուտ ու կեղծութիւն:



Եւ կիսն ի՞նչ է որ... յաւիտեան նանիր. առնախանձ միսարդ, խորամանկ խաբող.
Որ հացդ է սիրում, համբոյրի մէջ թոյն, և քս զրի՛ն մէջ ուրիշին գգնող:
Խորխուլ մակոյկով յանձնելը ծովին, կնոջ երգումին քան թէ հաւատա՛,
Նա՛ կաւստ, վարար, նա՛ չքնաղ դժոխք, իբլիսն է խօսում բերանով նրա:

Դու երազե՛լ ես ասողը հեռաւոր, հրեշտակաթեւ շուշանն սպիտակ,
Որ քո վերքերին բալասան լինի, ոսկէշո՛ղ երազ կեանքի ցաւի տակ:
Դու տենչացե՛լ ես լսյո-ափերի մէջ քեզ իրեն կանչող աղբիւրի երգին,
Եւ անմահութեան ցօ՛ղն ես երազել ու անուշլացել երկնային կրճէին,
Բայց սէրը կնոջ՝ տոչորած հոգուդ աղ-ջուր է տալիս, որ միշտ ծարաւնաս,
Հուր կարօտի մէջ յաղթական կնոջ մարմինը լիզես եւ չը յագենաս:
Ո՛ր կնոջ մարմին՝ պագչո՛տ, օձիկէն, դիւական անօթ ոճիրների չար,
Դո՛ւ, որ մսեղէն դառն հաճոյքով արեւ հոգու դարձնում ես խաւար:
Ատում ե՛մ սէրը, մահի պէս անգութ, յաւիտեան այրող, խոցող գաւտնաբար,
Այդ թունոտ գինին, որով արբողը ստրուկ է դառնում և կամ բռնակալ:
Ատում ե՛մ կնոջ, տարերքը կրքի, միշտ բեղմնաւորող եղեռնը անսանձ,
Աղբիւրն անսպառ, որ կուտակում է աշխարհի վրայ տիղմը չարութեանց:
Ատում ե՛մ նորից սէրն ու կնոջը, իւր համբոյրները շողում ու դժնեայ,—
Փախչում եմ նրա ճահիճ—մահիճից, և անիծում եմ երկունքը նրա:
Երկունքը դաժան և յաւերժական, որ հեղեղում է վտառն իժերի,
Որոնք խայթում են, յօշոշում իրար, ասողերն են սլօժում տուփանքով ժահրի:
Սրիկա է նա, ով հայր է լինում, ո՛վ երանաւէտ ծոցից ոչնչի՝
Զգալու կոչում թշառ հիւլէին և զլիսին վառում գէհէնն այս կեանքի:
«Իմ հայրը իմ գէ՛մ մեղանչեց, սակայն չ՛մեղանչեցի ես ոչ ոքի գէ՛մ», (*)
Այս իմ կտակը թո՛ղ գրւի շիրմիս, եթէ լուսնի տակ մի խորշ պիտ՝ գտնեմ:
Ինչքան ժամանակ, որ ծովը պիտի փարէ Հէջաղի ափերն զմրուխտեայ,
Ես ետ չե՛մ դառնայ կնոջ մօտ երբեք, ես չեմ կարօտնայ թովչանքին նորա:
Կը գգնեմ վայրի տատասկը դժնեայ և կը համբուրեմ վիշերը նրա,
Գլուխս կը դնեմ այրւող ժայռերին և կուլամ նրանց ջերմ կրճի վրայ»:
Եւ քարաւանը մեղմիկ կարկաշով չափում էր ուղին ու՛ր ու մօլ՛ւր,
Դէպի երազուն, ոսկեղէն հեռուն հոսում էր առաջ հանգի՛ստ ու անդորը:
Զանգակներն, տես, հեկեկում էին ու ծորում հատ—հատ հնչուն արցունքներ,
Քարաւանն, տես, լալիս էր անուշ, ինչ որ Մահարին սիրել, լքել էր:
Եւ դիւրեւների սրինգները մեղմ գեղգեղում էին շարքներն անո՛ւշ
Սիրոյ վերքերի, վշտոտ կարօտի և երազական թախճանքին քնքուշ:
Եւ Աբու Լալան խորհում էր մռայլ և նրա վիշտը անհունի նման,
Ինչպէս իր ուղին, որ գալարում է, ձգւում է անձայր ու չունի վախճան:
Հիւսելով անձիր ճանապարհի հետ լուռ թախճում էր նա ցերեկ ու գիշեր,
Հայեացքը յառած անյայտ աստղերին՝ հոգու մէջ դառն ու ցաւոտ յուշեր:
Եւ ետ չէր նայում անցած ճամբէքին, ոչ մի ափսոսանք թողած-լքածին,
Ողջոյն չէր վերցնում, ողջոյն չէր տալիս անցնող ու դարձող քարաւաններին:

[*] Այս խօսքերը գրւած են Բանաստեղծի շիրմի վրայ:

ԵՐՐՈՐԴ ՍՈՒՐԱՀ

Եւ քարաւանը Աբու Լալայի աղբիւրի նման մեղմ կարկաչելով,
Հանգիստ ու հանգա՛րտ քայլում էր առաջ հեղ Լուսնկայի շողերի միջով:
Եւ Լուսինն, ինչպէս ջէննաթի մատաղ փերիի կուրծքը՝ չքնաղ, լուսավառ՝
Մերթ ամաչելով պահում էր ամպում եւ մերթ թրթռուն փայլում էր պայծառ:
Ներսէին մտել ծաղկունքը բուրեան՝ աղամանդներով, չքեղ-գինդերով.
Ծիածանաթեւ հաւքերը իրար գուրգուրում էին քնքուշ մրմունջով:
Մեխակի բոյրով հոգն էր շշնջում հէքեաթներն հազար ու մէկ գիշերւայ,
Արմաւն ու նոճին անուշ քնի մէջ՝ օրօրում էին ճամբէքի վրայ:
Հովի գրոյցին ունին դնելով Աբու Մահարին խօսում էր անձայն.—
«Աշխարհն էլ, ասես, մի հէքեաթ լինի՝ անդկիզբ, անվերջ, հրաշք գիւթական.
Եւ ո՞վ է հիւսել հէքեաթն այս վսեմ, հիւսել աստղերով, բիւր հրաշքներով,
Եւ ո՞վ է պատմում բիւր-բիւր ձեւերով՝ անգուլ ու անխոնջ՝ այսպէս թովչանքով:
Ազգեր են եկել, ազգեր գնացել, եւ չեմ բմբունել իմաստը նորա.
Բանաստեղծներն են հասկացել դոյզն ինչ են թոթովում են հնչիւններն անմահ:
Ոչ ո՛ք չէ լսել սկիզբն նորա, եւ չէ լսելու վախճանը նորա,
Ամէն հնչիւնը դարեր է ապրում, ամէն հնչիւնին վե՛րջ, սկի՛զբ չ'կայ:
Բայց ամէն մի նոր ծնւածի համար նորից է պատմում հէքեաթն այս չքեղ,
Նորից սկսում եւ վերջանում է ամէն մի մարդու կեանքի հետ մէկտեղ:
Կեանքը երազ է, աշխարհը՝ հէքեաթ, ազգի՛ր, սերունդնե՛ր—անցնող քարաւան.
Որ հէքեաթի մէջ, վառ երազի հետ, չսում է անտես գէտի գերեզման:
Կո՛յր ու գո՛ւլ մարդի՛կ, առանց երազի, առանց լսելու հէքեաթն այս վսեմ,
Իրա՛շ կսկիւրդից պատառ են հանում եւ դարձնում աշխարհն ահաւոր ջէհնէմ:
Ձիւր օրէնքները — լուծ ու խարազան, և անելք մի ցանց խօլական սարգի,
Եւ որոնց ժահրով թունաւորում էք երգը բլբուլի, անուրջը վարդի:
Եղիլի մարդի՛կ, փռի կը դառնան ձեր չար սրտերը, ձեր վատ գործքերը,
Եւ ժամա՛ռակի ձեռքը անտարբեր կը սրբէ կ'աւել ձեր պիղծ հեռքերը:
Եւ ունայնաշունչ հողմը կը շաչէ ձեր ոսկորների քարերի վրայ,
Իսկ վայելելու դուք միշտ ապրկար՝ երազն այս չքնաղ, հէքեաթն այս սսկեա՛յ»:
Գոհար աստղերի քարաւանները թափառում էին երկնի ճամբէքով,
Եւ զօղանջում էր սղջ երկինքն անհուն՝ աստղերի չքե՛ղ, անչէ՛ջ դաշնակով:
Եւ արար-աշխարհ լցած էր, գիւթւած նւագումներով յաւէրժ, երկնային,
Անուրջների մէջ նա վերասլաց լսում էր հոգւով վսեմ երգերին:
— «Գնա՛, քարաւան, մեղմ հնչիւններդ հիւսելով երկնի լոյս-զօղանջի հետ,
Վիշտա տո՛ւր հովին, քայլէ՛ բնութեան ծոցը մայրական, և մի նայիր ետ:
Տա՛ր ինձ լուսազգեստ օտար մի եգիբք, հեռո՛ւ, հեռաւո՛ր, մենաւո՛ր տփե՛ր,
Սուրբ մենակութիւն, դո՛ւ, իմ ովասի՛ս, երազների աղբիւր գովաբեր:
Լուրթեան երկի՛նք, խօսի՛ր դո՛ւ, ինձ հետ աստղերիդ լեզուով, և ամսքի՛ր ինձ,
Գուրգուրի՛ր հոգի՛ս՝ աշխարհից խոցւած, մարդուց խայթւած վիրաւոր հոգիս:




Իմ մէջ այրում է մի անյագ կարօտ , կարեկից մի սիրա՛ լացող յաւիտեան,
Եւ իմ հոգում կայ մի չքեղ երազ, և սուրբ արատաւք, և սէր անսահման:
Ոգիս ազատ է, ես չեմ հանդուրժում իմ վրայ իշխող ո՛չ մի գորութեան,
Ո՛չ օրէնք, սահման, ո՛չ ճակատագիր, ո՛չ չար ու բարի, և ոչ դատաստան:
Իմ գլխի վերեւ չ'պէտք է լինի ո՛չ մի հովանի, ո՛չ մի իրաւունք,
Եւ իմ կամքից դուրս ամէն ինչ բանտ է, և ստրկացում և բռնադատումք:
Ես կ'ուզեմ լինել անսահման ազա՛տ, անպարաք, անիշխան այլ և անաստուած,
Հոգիս տեսնում է միայն, միմիայն՝ մեծ ազատութեան՝ անհուն, անտարա՛ծ»:
Եւ քարաւանը հիւսում էր առաջ և նորա վերեւ շողում էին վառ
Մանկան ժպիտով աստղերը պայծառ, այն յաւերժափայլ աչքերը գոհար:
Եւ կանչում էին նրան կաթողին լոյս-թարթումները ոսկի աստղերի,
Եւ հոգին լցնում վսեմ դաշնակով երկնքի հազար բիւրեղ զանգերի:
Վճիտ գիշերին գիւթական ցոլքով փայլում էր ուղին փերուզեայ հեռում,
Եւ քարաւանը՝ օրօ՛ր ու շորօ՛ր, քայլում էր անդորր փերուզեայ հեռուն . . .

ՉՈՐՐՈՐԴ ՍՈՒՐԱՀ

Գիշերն անարկուն՝ թևերը փռեց մի սև և հսկայ թռչունի նման,
Անծիր թևերը իջտն, ծածկեցին քարտառնն, ուղին, դաշտերն անսահման:
Եւ հորիզոնից մինչ՝ հորիզոններ երկինքը լցեց մռայլ սամպիրով:
Չէին շողչողում լուսին և աստղեր. խաւարն, ասես թէ՝ պատած խաւարով:
Եւ հողմերն անեղ՝ նժույգների պէս, սանձարձակ, վայրի արշաւում էին,
Յորձանքներ տալով, և հողն ու փոշին այրւած դաշտերից խառնում ամպերին:
Եւ մահասարսուռ շառաչում էին, և աղաղակում հազար ձայներով,
Ասես, վիրաւոր զազաններ էին, մռնչում-ռնում հողմերի բերնով:
Նեղ ձորերի մէջ զաւարւում էին և արմաւենու հոծ անտառներում
Հեծեծում էին հողմերը ախուր, որպէս թէ՝ մի սիրտ ողբում էր տրտում:
— «Գնա՛, քարաւա՛ն, հողմերի դիմաց աննկուն քայլի՛ր աշխարհի եզրը,
Սյսպէս էր խօսում իր սրտի խորքում Աբու Մահարին, մեծ բանաստեղծը:
Շառաչէ՛ք գլխիս, ամենի հողմե՛ր, դուք, մրրիկնե՛ր, պայթեցէ՛ք գլխիս,
Ես բաց ճակատով ձեր դէմն եմ կանգնած, ես վախեցող չեմ, զարկեցէ՛ք ճակտիս:
Ես ետ չեմ դառնայ ժանտ քաղաքները, ուր բազմաթիւ կրքերն են եռում,
Ոստաններն արեան, ուր մարդը դաժան իր նմաններին է միշտ պատառում:
Իմ անտուն գլուխ, դու տուն չես դառնայ, ինքդ մարեցիր երգդ հայրական,
Վա՛յ նրան, ով որ տուն ու տեղ ունի, կապուած է շան պէս շէմքին իրեն տան:
Արշաւէ՛ք, հողմե՛ր, իմ հօր տան վրայ, քանդէ՛ք, աւերէ՛ք հիմերը նորա,
Եւ փոշին ցրէք մեծ աշխարհով մէկ, — անծայր ճամբան է իմ տունը հիմա:
Մենակութիւնն է իմ սէրը հիմա, երկինքն աստղաբիւր — վրանս հայրական.
Եւ քարաւանն է ընկերս հիմա, և իմ հանգիստը — ուղիս անկայան:
Դս՛ւ, կախարդ ուղի, յաւիտեան անյա՛յտ, յաւիտեան դիւթող իմ նոր հայրենիք,
Տար ինձ—իմ սիրտը՝ յաւիտեան լացող՝ այնտեղ, ուր բնաւ չեն տեսել մարդիկ:
Մարդկանց մօտ պէտք է աշաւուրջ լինիս, միշտ ոտքի վրայ և սուրը՝ ձեռքիդ,
Որ քեզ չը լլկեն, քեզ չյօշոտեն թէ՛ բարեկամդ, և թէ թշնամիդ:

Բաշկաւաններից հեռս՛ւ տար դու ինձ, որոնք անկշտում մոծակների պէս,
Հետեւում են քեզ, երբ արիւն սնես, իսկ երբ ցամաքես, կը մռռան քեզ:
Իմ խոր վէրքերը ո՞վ կը նիւնէր ինձ, թէ չ'լինէին ընկեր, բարեկամ,
Որոնք համբոյրով սիրտս բացեցին, որոնք համբոյրով խայթեցին նրան:
Բիւր կեղծիք ունի իր աղւանքի մէջ համբոյրը մարդկանց, համբոյրն ընկերի,
Որով որսում է զաղտնիքը սրտիդ և դարձնում է քեզ յաւիտեան դերի:
Ի՞նչ է ընկերը և բարեկամը՝ նենգ ու դրուժան, չարակամ ու վատ,
Իմ հոգում մեռաւ սիրոյ մի երկինք, մի վառ արեգակ, ե՛ւ սէր, ե՛ւ հաւատ:
Բարեկամն ի՞նչ է— լաւիդ նախանձող, քայլիդ խուզարկու, բամբասող ազահ,
Ծանօթ չները չեն հաչում վրադ, ծանօթ մարդիկ են հաչում քո վրայ):
Հողմերն անհեթեթ ջինների նման՝ Աբու Հալայի խոժոռուն դէմքին
Քրքջում էին, ծափ տալիս, ծաղրում և ապառօշից քաշքշում ուժգին:
Եւ քղանցքներից կախ էին ընկնում և աչքերի մէջ Աբու Հալայի
Շաղ էին տալիս բուռերով փոշի եւ կտրում թելը նորա խոհերի. . .



ՀԻՆԳԵՐՈՐԴ ՍՈՒՐԱՀ

Եւ քարաւանը ճեղքելով վատահ մըրկապարը վայրագ ջինների,
Անշեղ ու անվախ ձգուում էր առաջ զողանջիւններով յուզւած զանգերի:
— Ի՞նչ է ընկերը ... հեզում էր անդուլ զայրացած սրտում Աբու Մահարին,
իմ ազնիւ ծոցում ես օձ անուցի, թռի՛ր, քարաւա՛ն, ընկե՛ր մտերիմ:
Եւ ուր որ կ'երթաս, այնտեղից նորէն գնա՛ ու գնա՛, առանց հանգրւան,
իմ բարի ճամբա՛յ, տա՛ր ինձ, կորցրո՛ւ, չքւիմ, տանջանքս մարդիկ չ'իմանան:
Եւ ի՞նչ ենք թողել, ի՞նչ կայ մեր ետեւ, որ մեզ պատրանքով ետ կանչէ նորից,
Փա՛ռք, գա՛նձ, իրաւո՛ւնք և իշխանութիւն... Թռի՛ր, հեռացի՛ր բոլոր—բոլորից:
Եւ ի՞նչ է փառքը,— այսօր քեզ մարդիկ եղջիւրներից վեր կ'ը բարձրացնեն,
Վաղը նոյն մարդիկ ճմլելու համար սմբակների տակ քեզ վար կը նետեն:
Ի՞նչ է պատիւը, յարգանքը մարդկանց.—սոսկ ոսկուց-վախից յարգ են մատուցում,
Իսկ երբ սայթեցիր, մուճակիդ փոշին մեծ մարդ է դառնում և քեզ հարւածում:
Եւ ի՞նչ է գանձը, որով յիմարը տիրում է մարդկանց, ե՛ւ հանձար, ե՛ւ սէր,—
Բիւրաւորների քամւած արիւնը, մեռելների միս, որբի արցունքներ:
Եւ արհամարհում եմ ամբոխին ռամիկ, մեծ յիմարն է նա, և տարրը չարի,
Ոգին հալածող, բռնութեան խարխալ, տխմարութեան մէջ գազան վիթխարի:
Ի՞նչ է համայնքը — թշնամու բանակ, և անհատն այնտեղ անշղթայ գերի,
Ե՛րբ է հանդուրժել հոգուդ թռիչքին և սլացումին նա վեհ մտքերի:
Նողկալի համա՛յնք, հեղձուցիչ օղա՛կ, քո լաւն ու վատը — անեղ խարազան,
Մի անհուն մկրատ բոլորին խուզող՝ միահաւասար և միանման:
Ի՞նչ է օրէնքը, մարդկանցից օրհնած, բիրտ ուժեղների այդ սուրը դաժան,
Անգործի գլխին կախւած յաւիտեան, խեղճին խողխողող, հզօրին պաշտպան:
Եօթն անգամ եօթը ատում եմ, ատում իշխանութիւնը — սերունդներ լափող,
Անյագ վաշխառո՛ւ, անկուշտ ձրիակեր, պատերազմների յաւէրժ յերկրորդ:
Անցած դարերի, գալիք դարերի մեծ դահիճն է նա եւ մեծն աւազակ,
Իր անցած ուղին — ոճիր ու նախճիր, սարսափներ վիժող, յիսկալ վոհմակ:
Նա հրէշի պէս կրծքիս է նստել, բռունցքն է անեղ սեղմել ճակատիս,
Եւ ամէն քայլիս շղթայ է դարկել, փականք է դրել լեզւիս ու մտքիս:

Նա փշրում է միշտ մեր ուսերը վար, ամէն ուր հասնում, ձգւում է մարդուն,
Եւ հայրենիքի անպարտ անունով բիւր կառափներից բուրգեր է կերտում:

Եւ ամէն ինչ է իշխանութիւնը — իրաւունք, օրէնք և արդարութիւն:
Նա ինքն է խիղճը և չարն ու բարին, իսկ դու՝ գերեզմա՛ն, դու՝ աշնչութիւն:

Եւ նզովում եմ իշխանութիւնը՝ հազարաճիրան մօլի բորենին.
Նրա աջէն քայլը — արիւնի հնձան, ուր տրորում է ծերին, մանուկին.


Ապիկար մարդի՛կ, ստրուկ ու վախկոտ, ո՞վ տւեց սուրը նմանիդ ձեռքին,
Ո՞վ տւեց նրան վրէժի իրաւունք՝ իշխել, խողխողել իր նմաններին:

Տա՛ր ինձ, քարաւան, իժերին յանձնի՛ր, թաղի՛ր հէզ սիրտս աւազների տակ,
Տա՛ր ինձ, ազատի՛ր իշխանութիւնից, ազատի՛ր նորա հովանուց վայրագ»:

Ո՞վ կայծակները հրեղէն թափով ծաւտում էին վաշտերն ամպերի,
Եւ արշաւասոյր՝ փշրւում էին ձերմակ բաշերին հեռու լեռների:

Եւ մրրիկները մռնչում էին, արմաւն ու նոճին շաչում - շառաչում:
Եւ քարաւանը արա՛գ, սըընթա՛ց, և քառատրոփ վազում էր թռչում:

Վազում էր թռչում, զրընդ հա՛ զրընդ, փոշու ամպերով ծածկելով ճամբէն,
Ասես, փախչում էր չար իշխանութեան քինոտ բռունցքից, որ չհասնի իրեն:



ՎԵՅՆԵՐՈՐԴ ՍՈՒՐԱՀ

Եւ միջօրէի բարկ արեւի տակ խիստ բուրում էին նարդիս ու ծոթոր,
Եւ քարաւանը՝ փոշու մէջ կորած՝ քայլում էր դանդաղ, յագնած քրտնաթոր:
— «Թախ՛ր, քարաւան՛ն, խորշակ ու մրրիկ ճեղքելով մախ՛ր աւազի ծոցը,
Այսպէս էր խօսում զայրացած սրտում Աբու Մահարին, մեծ բանաստեղծը:
Թո՛ղ անապատի բոց հողմն իմ դէմ գայ, աւազի վրայից հետքերս ջնջէ,
Ուր մարդը երբեք տեղս չգտնի, իմ շնչած օդը մարդը չը շնչէ:
Տեսնում եմ ահա շէկ առիւծներին՝ դեղին շեղջերից աչքիս են նայում,
Տեսնում եմ նրանց, սրունց սսկեղէն բաշերից հողմը կայծեր է պոկում:
Արի՛ք կանչում եմ, ես փախչողը չեմ, արի՛ք լափեցէք սիրտս վիրաւոր,
Ես ետ չեմ դառնայ մարդու մօտ երբեք, դուռը չեմ փախի մարդու նենգաւոր:
Մարդիկ ի՞նչ են որ... դիմակած դեւեր, ժանիքներ ունին, անտես ճիրաններ,
Սմբակներ ունին եւ որոճող են եւ նրանց լեզուն — թունաւոր սուսեր:
Եւ ո՞վ են մարդիկ... պաղշտ, եսամո՛լ, մատնի՛չ, ուրացո՛ղ, աղէսների հօտ,
Արիւնքներ լակող, դահիճ, դահճապետ, գողա՛ն մանկամորթ, գողա՛ն մանկամորթ:
Աղքատութեան մէջ՝ քծնող, վաճառող. թշուառութեան մէջ՝ վախկոտ փոքրողի,
Հարստութեան մէջ՝ անգութ, վրիժառու, եւ ամբարտաւան, չարախինդ, լկտի:
Զոհում է լաւը վատերի համար, եւ վատն ու չարը լլկում են, տանջում
Մի բուռ լաւերին այս վատ աշխարհում, եւ կեանքի արտում սրտն է աճում:
Նզովում եմ ձեզ, հեռաւո՛ր մարդիկ, ձեր չարն ու բարին, կրօնները ձեր,
Որոնք միմիայն չգլխայ են կռում եւ սարկութեան կոփում գնդաններ:
Ապրատ աշխա՛րհ, ուր հօր սակին դարձնում է գողին՝ ագնիւ ու շիտակ,
Ապուշին՝ հանճար, վախկոտին՝ կտրիճ, յայտնի պոռնիկին — անբիժ հրեշտակ:
Մարդկային աշխա՛րհ, արեան բաղանի՛ք ուր թոյլն՝ յանցաւոր եւ հօրն՝ արդար,
Ուր մարդը ախեղձ՝ ինչ որ տնում է այս քարը աշխարհում՝ սոսկ նիւթի համոր:
Սոսկ շահի համար, նրան միշտ գերի, աստաճացնող թաթը կղեւնի,
Ահա մարդը միշտ — պառկելու Աստծու, սակայն իրապէս վիժւած չէլթանի:
Համբիւով մէկ-մէկ անթիւ քայլերը իմ քարաւանի, իմ անծայր ճամբու,
Անթիւ քայլերը չեն հասնում չափին մի օրում գործած յանցանքին մարդու:

Ասում եմ տհա՛ւ արեւելքին, հիւսիս, հարաւին եւ արեւմուտքին,
Որոնց հողմերը իրար հետ ներհակ՝ լսում են մէկտեղ իմ արդար խօսքին:
Տարէ՛ք, տարփողէ՛ք խօսքս հրեղէն, որ ծովերից ծով աշխարհներ լսեն,
Թէ՛ աւելի վատ, աւելի զաղիր քան մարդը դաժան, — այդ մարդն է նորէն:
Այնքան ժամանակ, որքան աստղերը տնջէ՛ թարթում են լուռ անապատին,
Եւ գալարում են շեղջերն աւազի, շշում ու ճշում նման օձերին —
Փախի՛ր, քարաւան, այդ պոռնիկութեան լալը ու արբելու ցոփ խնձոյքներից,
Ստի ու կեղծի հրապարակներից եւ վաճառանքի պիղծ շուկաներից:
Համայնքից փախի՛ր, մարդկանց արիւնստ արդարութիւնից, փախի՛ր վրէժից,
Փախի՛ր ընկերից, կնոջից, սիրուց, փախի՛ր, կանգ մի՛ առ մարդկանց սուերից:
Գնա՛, քարաւան, ներբաններիդ տակ տորի՛ր, կոխի՛ր օրէնք, իրաւո՛ւնք,
Եւ ճանապարհիդ փոշիով ծածկիր թէ՛ չարն ու բարին, թէ՛ իշխանութիւն:
Եւ թո՛ղ յօշոտեն ինձ վազը ու առիւծ, օձուտ հողմերը շաչեն ինձ վրայ, —
Եւ այսպէս, մինչեւ օրերիս վերջը, քարաւանս անդա՛րձ, գնա՛ ու գնա՛...»
Իրենց աղեղի պարանոցները՝ ուղտերը լարած նետերի նման,
Զիլ վազում էին, եւ իրենց ետքից թողնելով փոշու թխպոտ քարաւան:
Զիլ վազում էին խանձած դաշտերով դէպի անապատ, դէպի հեռաստան,
Սքօղում էին հողի ամպերով անծիր դաշտերը, աւան ու ոստան:
Կարծես՝ վախեցած փախչում էր արագ՝ առանց հանգրւան Աբու Մահարին,
Կարծես՝ օրէնքը, կինն ու համայնքը նրան կրքնկ-կոխ հետեւում էին:
Եւ քարաւանը զրը՛նգ հա՛ զրը՛նգ առանց նայելու անցնում էր անդա՛րձ
Բուրգերի տակով մեծ քաղաքների՝ հացի ու կրքի ժխորով լցւած:
Վազում էր հապճեպ՝ անգիտութեան մէջ դարեր քարացած գիւղերի մօտով,
Վազում էր անդուլ դէպի անապատ, սսկեհոս աստղի անդուսպ կարօտով:
Քարաւանն հետստ օրեր-գիշերներ կտրում էր ուղին ոլոր ու մոլոր,
Եւ խռով հոգով Աբու Մահարին խորհում էր ցասկոտ՝ ճակատը խոլոր:
Խօլ քարաւանը նրա խոհերի բաղէների պէս՝ ծեծկւած մրրիկով՝
Սլանում էին՝ խռիւ ու ցրիւ՝ մի լոյս-հանգրւան գտնելու հեւքով:
Եւ լալիս էր նա առանց արցունքի, եւ նրա վիշտը նման անհունի, ¹
Ինչպէս իր ուղին, որ քալարում է՝ անծայր օձի պէս եւ վախճան չունի:
Եւ ետ չէր նայում անցած ճամբէքին եւ չէր ափսոսում թողած, լքածին,
Ողջոյն չէր վերցնում, ողջոյն չէր տալիս եկող ու անցնող քարաւաններին...

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՍՈՒՐԱՀ

Եւ քարաւանը Աբու Լալայի Արարատանի մեծ անապատի
Գարպասների մօտ ծունը առաւ յաքնած...

Հորիզոնները հրդեհեւում էին իրենց ամայի, ազատ ավերում,
Մութն հաւաքում էր քղանցքը թաւշեայ, բացերով բոսոր երկինքն էր ծփում:

Եւ Աբու Լալան նստեց մենաւոր, գլուխը յենած յակինթ ժայռերուն,
Հագին անդորրած եւ հաշտ ու պայծառ, հայեացքը սուղած գիւթական հեռուն:

— «Ո՛հ, ի՛նչ ազատ եմ, անպարփակ ազատ մի՞թէ կարող է այս մեծ Սահարան
Պարուրել, գրկել իր ծիրերի մէջ ազատութիւնս՝ անհուն, անսահման:

Ո՛չ մի մարդկային աչք ինձ չի տեսնի. չի հասնի ո՛չ մի մարդկային բազուկ,
Ո՛վ ազատութիւն, դու գրախտային չքնաղ վարդերի լուսեղէն բուրմունք:

Քո պերճ-վարդերով դու պսակի՛ր ինձ, վառի՛ր իմ հագում ջահերդ հուր-հրան.
Ո՛վ ազատութիւն, դու գրախտային լոյս-բլբուկների անմահ Ալ-Ղորան:

Ձքնաղ առապար, դու միայնութեան սակեղէն աշխարհ, քեզ հազա՛ր ողջոյն,
Անարատ Բադիէ՛, ուր մարդը մարդուն չի լլկել բնաւ, օրհնեալ լինիս դուն:

Տարածի՛ր անծիր, փռի՛ր աւազիդ գեղին ծովերը ազգերի վրայ.
Ծածկի՛ր ողջ մարդկանց, քէօք ու խճիթներ, գիւղ ու շահաստան, շուկայ ու դալայ:

Վիշապ-հողմիդ հետ ազատութիւնը թո՛ղ զահակալէ աշխարհը համուռ,
Եւ ոսկէ վառէ վսեմ արեւը, ազատութիւնը աշխարհափրկող»:

Հազար ու հազար հրաշալիքներով եւ հրաբորբոք հրապոյրներով
Շէմս-արեւն ելաւ՝ շքեղ, լուսափառ, վարդի, սնդուսի բիւր պարոյրներով:

Եւ վեհ արեւի ջահերի ներքոյ փուռեց, ծաւալեց ծիրն անապատի,
Վառ-վառ հուրհրտոց, ինչպէս տիտանեան հսկայ առիւծի սակեղէն մարթի:

— «Սալա՛մ քեզ, արեւ, շիւքըր բիւրաբիւր, դու Աստծուց հօրը, դու կեանքի աղբիւր.
Դո՛ւ, իմ անմահ մայր, մայրական դո՛ւ գիրկ, դու միակ բարի, դու միայն սո՛ւրբ,
սո՛ւրբ»:

Տիեզերական դու անհուն բաժակ ոսկի արեւցման և երանութեան,
Դո՛ւ հրճանքի, հրապոյրների հրեղէն գինու դու անհուն ովկիան:

Տիեզերական հազարահանգէս դո՛ւ մեծ խորախճանք, բարի արեգա՛կ,
Ահա՛ իմ հագին — մի ծարաւ բողբոջ, թափի՛ր նրա մէջ գինիդ անապակ:

Քո երջանկութեամբ, քո պայծառութեամբ, քո յաւերժութեամբ հարբեցրո՛ւ ինձ,
Տու՛ր ինձ անցեալի անգարթ մոռացում, լոյս անուրջներում քո բուրումնալից:

Հարբեցրո՛ւ ինձ, հարբեցրո՛ւ ինձ, քո անմահ գինով հարբեցրու ինձ,
Մոռանամ մարդուն, սուտն ու մոայլը, մոռանամ յաւերժ չարիքն ու թախիծ:

Քո անմահութեամբ քո վսեմութեամբ հարբեցրու ինձ լոյս հիացքներով,
Խաւարների դէմ անյաղթ ախոյեան, գարունների մայր, ուրախութեան ծո՛ղ:

Դո՛ւ միակ բարի, դո՛ւ միակ իմ սէ՛ր, դու միայն սո՛ւրբ, սո՛ւրբ, մայրական դու գիրկ.
Դո՛ւ յաւէտ գթո՛ւտ, մահը խորտակող, դո՛ւ գերահրաշ, միակ գեղեցիկ՝

Ես սերում եմ քեզ, ես սիրում եմ քեզ, հրեղէն սիրով կիզի՛ր, խոցի՛ր ինձ,
Եւ ոսկեճաճանչ վարսերդ շքեղ փռի՛ր ինձ վրայ, եւ գուգուրի՛ր ինձ:

Եւ արիւնստի՛ր իմ շրթունքները համբոյրիդ խայթով քո հրդեհակէզ,
Երջանկափրկու քո լոյս գիրկը բաց, ես սիրաբորբոք թռչում եմ դէպ՛ քեզ:

Իմ ազնիւ ուղտե՛ր, ոտքի կանգնեցէ՛ք. — դարձաւ Մահարին իր քարաւանին,
Եւ թօթափեցէ՛ք ձեր սրունքներից ստրուկ աշխարհի զազրելի փոշին:

Եւ թո՛ղ խլանան իմ ականջները՝ աղմուկն աշխարհի չլսես յաւէտ,
Յաւէտ կ'ուրանան աշխարհի համար՝ մարդկանց տեսնելու ա՛յլ չնայեմ ետ:

Դէպի արեւը դարե՛ր ու դարե՛ր թռի՛ր, սլացի՛ր ազնիւ քարաւան,
Նրա լուսեղէն, բոցեղէն գրկում, որ արեւանամ եւ յաւերժանամ:

Ո՛հ, իմ մայր-արեւ, քո ոսկեփրփուր ծիրանիդ կ'ուզեմ ուսերիս ձգես,
Որ ես յաղթական, լոյս-փառքերիդ մէջ սրարբած սուրամ դէպի՛, դէպի՛ քեզ:

Դո՛ւ Աստծուց հօրը, դու միա՛կ իմ սէր, դու միակ իմ մայր, մայրայան դու գիրկ,
Դո՛ւ միա՛յն բարի, դո՛ւ միա՛յն սո՛ւրբ, սո՛ւրբ, դու գերահրաշ միա՛կ գեղեցիկ»...



ՎԵՐՋԻՆ ՍՈՒՐԱՀ

Եւ ուղտերն, իբրեւ ոսկի մակոյկներ, հուր-ալիքները ծով-անապատում
ձեղքելով արագ սլանում էին դէպի բոցավառ, լուսավառ հեռուն:
Եւ ոչ մի սամում հրաշունչ թեւով չէր կարող հասնել նրանց արշաւին,
նրանց թռիչքին չէր կարող հասնել սլաքը նետի վայրի բեգունին:
Վառագիւններից զով սիւքն էր բերում վառ քասիգները այրող կարօտի,
Դայլայլում էին կաթն-աղբիւրները երազներն իրենց կուսակաւն սրտի:
Եւ հէքեթների լոյս-փէրիները մայր-արմաւենու քնքուշ սօսիւնով
Համբոյր ու ողջոյն ուղարկում էին եւ կանչում նրան գաղտնի խոստումով:
Բայց Աբու Լալան չէր ուզում լսել սիրոյ ողջոյնին, գողտրիկ սօսաւին,
Թռչում էր անյագ՝ դէպի արեւը, եւ ինքն էլ պայծառ նման արեւին:
Իսկ սերաքները նոր տեսիլներով բիւր պատրանքների, հրապոյրների՝
Թռցնում էին կախարդած հոգին ոսկի թեւերով լոյս-անուրջներին:
Ուղտերը արձակ պարզասաններով հոռիկու, մոլեգին, այնպէս խօլաբար՝
Սլանում էին, ճախր էին առնում հրեղէն թափով, խենթ ու խելագար:
Եւ արեգակաւ վառ ցնցուղի տակ բոցկլտում էին ուղտերը զւարթ,
Եւ բարձրադողանջ կայլակում էին զանգակներն ազա՛տ ցնծո՛ւն, լուսազա՛րդ:
Աբու Մահարին արծըւի նման աչքերն անքթիթ՝ արեւին յառած,
Թռչում էր աննինջ, հոգին լուսարբած եւ երանութեան ջահերով վառւած:
Նրա ետեւում լոկ անապատն էր փռւած հողանի լոյսերի ծոցում,
Իսկ գլխի վերեւ արեւն էր նազում շափիւղեայ վարսերն անծայր տարածուն:
Եւ ոսկեփոփուր ծիրանին ուսին Աբու Մահարին, մեծ բանաստեղծը
Թռչում էր անգուլ՝ յաղթական ու վեհ, դէպի արեւը, անմահ արեւը...

ԱՐԱՐԱԿԱՆ - ՊԱՐՄԿԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Գիւլստան — Վարդանոց, վարդաստան
Ջէննաթ — Դրախտ
Դազէլ — Սիրոյ երգեր
Քէօշք — Ապարանք
Շարքի — Արեւելեան եղանակներ
Փէրի — Յաւերժահարս
Ջէհնէմ — Դժոխք
Ճին, ջին — Ոգի
Սահարա — Անապատ
Բադիէ — Անապատ
Ղալայ — Բերդ
Շէմա — Արեւ
Սալամ — Ողջոյն
Շիւքր — Փառք, գոհութիւն
Սամում — Անապատի տաք հողմ, խորշակ
Վուճադի — Հովիտ, գետահովիտ, ովախի մտքով
Սերաք — Միրափ, օդերեւոյթ
Քասիդ — Պօէզի, պօէմ. համարեա միշտ երկար, երկտող
Սուրահ — Ղուրանի գլուխները
Ալ - Ղորան — Ղորան

Օ Մ Ա Ր Խ Ա Յ Ա Մ Ի Վ Է Ճ Ը

Ա Ս Տ Ծ Ո Յ Հ Ե Տ

Օմար խայամը խորասանի վշտահար բանաստեղծը, ոտկեղէն նարեկների մէջ նստած՝ աշխարհի ունայնութիւնը մոռնալու համար կաւէ գաւաթից գինի էր խմում:

Այդ միջոցին բարձրացաւ յանկարծ մի սատանի—քամի, որ իր պոչի վրայ ցցւած՝ պտոյտ գալով խելագարի պէս այս ու այն կողմն էր վազվովում, ձեռքն ընկածը քշում, ջարդում, կոտորում:

Մէկ էլ, հարամու պէս արշաւեց նա խեղճ խայամի վրայ, անտես փէշերով տւեց, վայր քցեց գինու գաւաթը կոտրեց կաւէ գաւաթը, գինին թափեց հողի վրայ:

Յետոյ խելառ ու չար քամին՝ թեւերը թափահարելով, սինլքորի նման սուշելով, շաշաքներով փախաւ, թռաւ հեռուները:

Խայամը մէկ զայրացած նայում էր հեռացող քամու ետեւից, մէկ ափսոսանքով նայում էր կոտորած գաւաթին և կենսաբաշխ կարմիր հեղուկին, որ ծառաւ գետինը ծծեց մի վայրկենում թունդ հարբեցողի պէս:

Ապա աչքերը ձգեց կապուտակ երկինքին և այսպէս ասաց Օմար խայամը, խորասանի վարդերի տխուր բլբուլը.—

Իմ վառ գինու զաւաթն հողէ

Դու կոտրեցիր, ո՛վ Աստուած,

Ուրախութեան դուռն իմ սուաջ

Դու փակեցիր, ո՛վ Աստուած:

Թող քերանը լցի հողով,

Որը խմեց իմ գինին,

Ի՞նչ տրեցիր, մի՞թէ դու էլ

Թունդ հարբած ես, ո՛վ Աստուած...

Եւ Աստուծոն լսելի եղաւ խայամի տրտուեցն ու յանգիմանութիւնը. բարկացաւ Աստուած, սասառիկ բարկացաւ, որ մի հողեղէն յագգնում է այդպիսի բերան բանալ, եւ պատեց Աստուած խայամին. բանաստեղծի բերանը ծուկեց, լեզուն կարկամեց. էլ չէր կարող խօսել խայամը, ունայնութեան քաղցրախօս բլբուլը:

Երբ անցաւ մի քիչ ժամանակ զգաստացաւ խայամը, տեսաւ ծանր պատիժը, զղջած և դարձաւ այսպէս թսթովեց գէպի Աստուած.—

Աշխարհումս սեղը չգործած

Ո՞վ կայ, ասա Աստուած իմ:

Եւ նա որը չի սեղանչում,

Ի՞նչպէս կ'ապրի, Աստուած իմ:

Թէ վատ անեմ, թէ վատ խօսիմ,

Դուն էլ ինձ վատ պատիժ տաս,

Ուրեմն ի՞նչն է իմ եւ քո մէջ

Տարբերութիւնն, Աստուած իմ...

Եւ Աստուծոն լսելի եղաւ խայամի զղումն ու իմաստալից խօսքը. զարմացաւ, թէ ի՞նչպէս մի հողեղէն կարող է այդպէս խելացի խօսել, ամաչեց ինքն իր մէջ. և ներեց խայամին՝ վերստին չընորհելով նրան ե՛ւ ծիրանի գինի, և աւելի իմաստուն լեզու:



6րդ Է. Կրտսեղ անգլիացիներ

152

21.

ԴԻՆ

ՍՈՒՐԻԱ ԵՒ ԼԻԲԱՆԱՆ

20 Ս. Դ.

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԱՐՏՍՍԱՀՄԱՆ

6 ՖՐԱՆՔ

Դիմել Հրատարակչին՝

ՊԱՐԹԵԻ ԱՆԱՆԵԱՆ

Փոսթարկը թիւ 606

ՊԵՅՐՈՒԹ

ԼԻԲԱՆԱՆ

Կը վաճառուի

Վահան Ուզունեան Գրատունը Պուրճի հրապարակ
Խորէն Ազնաւորեան, Առաքելեան, Ապամեան
Կ. Տօնիկեան եւ Նաճարեան գրատունները: